№ 230 Դեկտեմբերի 24 1880 Դեկտեմբերի 24 № 230

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարազգացիներին վիճակում են ուղղվի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի ուրբաթ և տօներին հետեւեալ օրերից)։

ՊԱՐՈՒԱԿՄԱՆ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Գիլիտուն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլի, կէս տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3. ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլի։

Դրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հրէաները Գերմանիայում։—Ն երքին տեսութիւն։ Հայոց թատրոն։ Նամակ Գանձակից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Голосъ» լրագրի թղթակցութիւնը։ Յուշատետրներ։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրները։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Հայոց լեզուի դասաւորութիւնը։

ՀՐԷԱՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Հակահրէական շարժումը շարունակվում է Գերմանիայում։ Բայց մեր կարծիքով մինչև անգամ հրէաների պաշտպաններն էլ սխալ դիրք են ընդունել նրանց պաշտպանելու համար։ Մինչև անգամ Մոմզէն պրոֆէսորը, որ Տրէյչկէի և Հտեօկերի դէմ հանդէս է գուրս եկել պաշտպանելով հրէաներին, իր վերջին բրոշիւրի մէջ խոստովանվում է որ հրէաները մեծ պակասութիւններ ունեն, ձգտում են առանձնական կեանք վարել, աշխատում են սահմանափակվել և երբէք չը խառնվել քրիստոնեայ ժողովրդի հետ և վերջը խորհուրդ է տալիս հրէաներին, եթէ նրանք կամենում են գերմանացի դառնալ, ընդունեն քրիստոնէութիւնը։

Տաս տարի է միայն որ հրէաները Գերմանիայում ստացան գերմանացիների հետ հաւասար իրաւունքներ, և գերմանացիները կամենում են, որ տաս տարվայ կարճ ժամանակամիջոցում, մոռանալով այն սարսափելի ճնշումը որ ծանրացած էր նրանց վրա, հրէաները յանկարծ հոգով և մարմնով դառնային գերմանացիներ։

Դա ամենալաւ ապացոյց է որ մի քանի դարեր առաջից առաջ մի սերունդի այս կամ այն ձևի դաստիարակութիւնը իր հետեւանքն ունի և շատ դարերից յետոյ։ Միջին դարերում կաթոլիկ ջոջով որքան կարելի է շատ խառն պակներ կատարվեն հրէաների և քրիստոնեաների մէջ, որ հրէաները լինելով միշտ գերմանացիների ընկերութեան մէջ, քաղաքակրթվեն նրանց ազդեցութեան տակ։

Թող այդ խնդիրների մասին լաւ մտածեն և հայերը իրանց վարմունքի վերաբերութեամբ այլազգաւոր հայերի հետ։ Թող չը մոռանան որ խաւարասէր, մոլորեցնող, մոլեռանդութիւն և նախապաշարմունք ներշնչող գրականութեան ու մտաւորի ներգործութիւնը կորստաբեր չէ միմիայն ազգի ներկայ սերունդի համար, բայց կանցնեն դարեր և այդ յանցաւոր մտաւորի կորստաբեր ներգործութիւնը, ինչպես մի սիֆիլիսական թոյն, կրկին երեւան կը գայ շատ և շատ տարիներից, շատ և շատ սերունդներից յետոյ։

Բողոքական, փիլիսոփայական և աղատամիտ Գերմանիան պարզ ցոյց տուեց որ դեռ ևս չէ ազատվել կաթոլիկ ինկվիզիցիայի կորստաբեր ազդեցութենից։ Վատ գաղափարները, գժբաղդաբար, միշտ աւելի խոր արմատներ են գցում մարդկութեան մէջ, քան թէ լաւերը։

Որքան, ուրեմն, յանցաւոր են նրանք, որոնք յանձն են առնում մոլորեցնել, բթացնել, կատաղի խաւարասիրութիւն մտցնել ներկայ սերունդի մէջ, շատ լաւ դիտենալով որ հատարակութեան մէջ գցած թոյնը արիւնի մէջ կը մնանի և նրանից չեն ազատվի և ապագայ սերունդները։

Գ. Ա.

ՌԱՆՏԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱՏԻՈՒԹԻՒՆ

Այն բարձր նշանակութիւնը, որ ունի մայրենի լեզուն իւրաքանչիւր ազգի վերածնութեան, մըտաւոր զարգացման և, որ գլխաւորն է, նրա յարատև գոյութեան պահպանութեան համար, եղել է միշտ և ամեն տեղ մի ազգու, բնական պատճառ այն հանդամանքի, որ բոլոր ազգերի ինքնահաստատութեան հասած անդամները ամենից առաջ սկսել են մտածել իրանց ազգային լեզուի մշակելու, ճոխացնելու և գեղեցկացնելու մասին։ Եւ այնտեղ, այն հասարակութեան մէջ, ուր արդէն դուրս է ցայտկել մայրենի լեզուի սիրոյ առաջին կայծը, միշտ, համարեա միաժամանակ, հանդէս են եկել նրա ուսումնասիրելուն նպաստելու երեք վսեմ ասպարէզներ. ընտանիք, դպրոց և գրականութիւն։ Այս երեք սրբավայրերը ազդել և գործել են այնպես ձեռք ձեռքի տուած, միահամուռ ոյժերով, որ ինչ որ տուել է առաջինը, կատարելագործվել է երկրորդում և ինչ որ արել են այդ երկուսը—կազդուրել է երրորդը։ Իսկ երբ զրանցից մէկը կամ միւսը առանձնապէս գործելով այդ չաղի վրա աւելի է մնացել յետ, կամ շատ առաջ ընթացել, ժամանակը միշտ վերադարձրել է նրանց խանգարված անհրաժեշտ հաւասարակշռութիւնը։ Երբոյ այն ազգին, որի ծնողները, ուսուցիչները ու գրողները կարողացել են գիտակցութեամբ, ընդհանուր ոյժերով շարժել ազգային լեզուի ծաղկեցնելու անիւը։...

Շատ հետաքրքիր կը լինէր ի հարկէ հետազոտել թէ ինչպիսի փոփոխութիւններ է կրել ասիանաբար մեր աշխարհիկ լեզուի ուսումնասիրութիւնն ու ծաւալումը հայ ընտանիքի, դպրոցի և գրականութեան մէջ և թէ ինչպիսի փոխադարձ օգնութեան յարաբերութիւն է երևացել այդ վերջինների մէջ վերաբերութեամբ առաջինի, սկսած գոնէ յիսուներորդ թուականներից։ Ասում ենք յիսուներորդ, որովհետև այդ ժամանակից են սկսել գլխաւորապէս Ռուսաստանի հայերը նայել իրանց մայրենի, աշխարհիկ լեզուի վրա գիտակցապէս և ճիգ թափել նրա վերականգնելու ու բարեւաւելու համար։ Բայց մի այդպիսի պատմական ընտրութիւն տալ մեր այս փոքրիկ լրագրական յօդուածին թէ դուրս է մեր նպատակից և թէ, գոնէ առժամանակ, բարձր մեր ոյժերից։ Ուստի թողնելով այս խնդրի մանրամասն մշակութիւնը մեր ամսագրերին և բաւականանալով միայն մի քանի նկատողութիւններ անելով մեր ընտանիքների և գրականութեան մասին այդ կողմից, մենք կանցնենք անմիջապէս այն հարցին, թէ ինչ վիճակի մէջն է այս բոլորս հայոց լեզուի դաստատութիւնը մեր ազգային ուսումնարաններում գլխաւորապէս և արքունական դպրոցներում մասնաւորապէս։

Եթէ մենք անցնենք սրանից մի քան տարի առաջ և մտաբերենք թէ որքան անմտաչելի էր մայրենի լեզուի մուտքը մեր ընտանիքներում, մանաւանդ Վրաստանի հայերի մէջ, կամ ձեռքերնիս առնենք այն ժամանակուայ տպված ու անտիպ գրուածները և համեմատենք այժմեան հայ հասարակութեան բոլոր դասակարգերի հայախօսութեան (թէև ոչ խիստ բաւականացուցիչ) կամ մեր գրականութեան այժմեան ճոխացրած, մաքրած ու կոկած աշխարհիկ լեզուի հետ,—մենք կը համոզվենք, որ այդ կարճ ժամանակամիջոցում թէ մեր ընտանիքը և թէ մեր մանաւանդ նորաբողբոջ գրականութիւնը ցոյց են տուել այդ կողմից հսկայական քայլեր։

Ուրիշ բան է, որ մենք չենք արել ասելի քան ինչ արել ենք, բայց որ դա մի հաստատ գրաւական է ապագայի համար, որ մեր նոր լեզուի չմնութեան հիմքը հայ ընտանիքում և գրականութեան մէջ արդէն ամրացած է,—այդ շատ աչկարաց, համոզեցուցիչ փաստ է։ Չի անցնի այլ ևս մի քանի տարի և օտարախօս հայ ընտանիք տեսնելը կը հատարվի մեզանում բացառութիւն, իսկ մեր մտաւոր գրական լեզուի կատարելութեամբ կարելի է մինչև անգամ պարծենալ։ Ցանկալի է միայն որ մեր ընտանիքները շարունակեն մաքրել մեր լեզուն օտար բառերից ու գարձուածներից, իսկ մեր մի քանի գրողները լայնեղ անեն վերջապէս գնահատել մեր նոր գրականութեան մէջ արդէն ընդունված, քաղաքականութիւն դարձած լեզուական կանոնները «Փարոս Հայաստանի» օրագրի և ընդգործածած ինքնուրոյն, կոտրած քարքառը